



**«Գործընկերություն գյուղական կանաչ տարածքների աղտոտման դեմ» ծրագրի համատեղ իրականացումը Վրաստանում, Հայաստանում, Մոլդովայում և Ռումինիայում**  
*(Ծրագիրը մասնակից երկրներում մեկնարկել է 2020թ-ի մայիսի 1-ից)*

Ծրագրում ներգրավված են 5 գործընկերներ՝ Վրաստանի Ցխալդուբոյի քաղաքապետարան՝ գլխավոր գործընկեր, ծրագրի գործընկերներ՝ Մոլդովայի Ունգենիի քաղաքապետարան, Հայաստանում՝ Կովկասի տարածաշրջանային բնապահպանական կենտրոնի հայաստանյան գրասենյակ, Ռումինիայում՝ Տեխնոպոլ Գալաթի ասոցիացիան և Վրաստանի Իմերեթիի «Սպեկտրի» գիտնականների միություն:

Ծրագիրը նպատակ ունի աջակցել շրջակա միջավայրի որակի բարելավմանը և գյուղական բնակավայրերում գետերի ջրազրկման կրճատմանը՝ աջակցելով թափոնների կառավարման և շրջակա միջավայրի վերաբերյալ իրազեկման ժամանակակից փորձի ներդրմանը՝ Վրաստանում, Հայաստանում, Մոլդովայում և Ռումինիայում:

Ծրագիրն առանձնահատուկ ուշադրություն կդարձնի գյուղական բնակավայրերի կարողությունների զարգացմանը: Կբարձրանան գյուղական համայնքների կարողությունները՝ աղբի 3R սկզբունքի իրականացման համար, ինչը զգալիորեն կնվազեցնի գետերի, հատկապես փոքր գետերի վրա մարդածին ազդեցությունը:

Ծրագիրը կնպաստի թափոնների կառավարման լավագույն փորձի ներդրմանը Վրաստանի, Հայաստանի և Մոլդովայի ընտրված գյուղական բնակավայրերում՝ հիմնված ԵՄ մոտեցումների վրա: Մասնավորապես պլաստիկի և թղթի տարանջատումը կներկայացվի Ցխալդուբոյի ու Խոնիի (Վրաստան) 7 համայնքներում, ինչպես նաև Վանաձորի ու Դիլիջանի (Հայաստան) 4 համայնքներում:

Ծրագրի հիմնական նպատակներից է նաև աղբի հիմնախնդիրների վերաբերյալ հասարակության իրազեկվածության և կրթության մակարդակի բարձրացումը, շրջակա միջավայրի պահպանության կարևորության գաղափարի և թափոնների կառավարման ժամանակակից փորձի ներդրումը: Այդ նպատակին հասնելու ճանապարհին կօգտագործվեն այնպիսի գործիքներ, ինչպիսիք են կրթական ծրագրերի և տեղեկատվական արշավների իրականացումը, զանգվածային լրատվամիջոցների և էլեկտրոնային լրատվամիջոցների օգնությամբ տեղեկատվության տարածումը, քաղաքացիների անմիջական ներգրավվածությունն ու մասնակցությունը շրջակա միջավայրի և մաքրման միջոցառումներին: Թիրախային խմբերի համար կկազմվեն տարբեր հրապարակումներ գետերի աղտոտման, թափոնների կառավարման վերաբերյալ:

Նախագիծը կնպաստի տարածաշրջանում միջսահմանային համագործակցությանը: Մասնավորապես, կստեղծվի միջսահմանային ցանց՝ նախագծում ներգրավված երկրների

**Common borders. Common solutions**



Project funded by  
EUROPEAN UNION



մասնակցությամբ: Ծրագրում ներգրավված քաղաքապետարանների միջև կատրագրվեն Քույր քաղաքների համագործակցության հուշագրեր:

Շահագրգիռ կողմերի մասնակցությամբ կատեղծվեն Քաղաքային թափոնների կառավարման պլան Դիլիջանի քաղաքապետարանի և Տեղական բնապահպանական գործողությունների ծրագրեր Ցխալդուրդի և Խոնիի քաղաքապետարանների համար:

Ծրագրի տևողությունը 24 ամիս է:

Ծրագիրը ֆինանսավորվում է Եվրամիության կողմից՝ Սնծովյան ավազանի 2014-2020 համատեղ գործնական ծրագրի շրջանակներում: Եվրամիությունից ծրագրի համար նախատեսված միջոցների ընդհանուր գումարը կազմում է 718 244.92 եվրո, Կովկասի տարածաշրջանային բնապահպանական կենտրոնի (Հայաստան) համար ԵՄ միջոցների ծավալը 129 030.00 եվրո է:

Կոնտակտային տվյալներ.

Դշխուհի Սահակյան, ծրագրի համակարգող

Հեռ: +374 91 32 85 84/87

Էլ.հասցե. [dshkhuhi.sahakyan@rec-caucasus.am](mailto:dshkhuhi.sahakyan@rec-caucasus.am)

Արմինե Հայրապետյան, ծրագրի օգնական

Հեռ: +374 99 999 037

Էլ.հասցե. [armine.hayrapetyan@rec-caucasus.am](mailto:armine.hayrapetyan@rec-caucasus.am)

**Common borders. Common solutions**